

**ՄԵԾԱՍՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄՍՀ-ԳՀԱՇԶԲ-22/31-1**

ք. Մեծամոր

«29» 09 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԱԶՇԻՆ ՍՋ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ասատրյանի, որը գործում է «ԳԱԶՇԻՆ ՍՋ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված գազիֆիկացման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7-րդ չափաբաժնի մասով՝ 140 օրացուցային օրվա ընթացքում, 10-րդ չափաբաժնի մասով՝ 130 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ սահմանված ժամկետում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր՝ եթե նախագծա-նախահաշվային փաստաթղթերով այլ ժամկետ սահմանված չէ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումով: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսի:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 97,499,275.00 (իննսունյոթ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, որից 16,249,879.00 (տասնվեց միլիոն երկու հարյուր քառասունինը հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

7-րդ չափաբաժին 57,568,613.00 (հիսունյոթ միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր տասներեք) ՀՀ դրամ՝ որից 9,594,769.00 (ինը միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր վաթսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

10-րդ չափաբաժին 39,930,662.00 (երեսունինը միլիոն ինը հարյուր երեսուն հազար վեց հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ՝ որից 6,655,110.00 (վեց միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար մեկ հարյուր տասը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնա-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագրի դեպքում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՐԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պարտավորություններից:

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.4, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական
կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001594, 900332001503
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար՝  Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գազին ՄՁ» ՍՊԸ
ք. Երևան, Արտաշիսյան 372, բն.16
«Արդշինբանկ» ՓԲԸ
hh 2480101509490000
ՀՎՀՀ 02229549
Տնօրեն՝  Ն. Ասատրյան



Հավելված 1
«29» 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՄՀԶԲ-22/31-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Դ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ	Կատարման	
							Հասցեն	Ժամկետը
1	45231115/7	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնքի Շենական բնակավայրի գաղփիկացման աշխատանքներ	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնքի Շենական բնակավայրի գաղփիկացման աշխատանքների կատարման ծավալաբեր-նախահաշիվը ներկայացված է կից Հավելված 1.2-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 1.1-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով: Առաջարկվող ասրների և սարքավորումների ցանկը համաձայն 1.4-ի:	դրամ	1	57,568,613.00	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Գ. Շենական	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 140 օրացուցային օրվա ընթացքում
2	45231115/10	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրի փողոցների Գ/ՃՀ-ման զազատարի կառուցման աշխատանքների կատարման ծավալաբեր-նախահաշիվը ներկայացված է կից Հավելված 1.3-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 1.1-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրի փողոցների Գ/ՃՀ-ման զազատարի կառուցման աշխատանքների կատարման ծավալաբեր-նախահաշիվը ներկայացված է կից Հավելված 1.3-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 1.1-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:	դրամ	1	39,930,662.00	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Գ. Գետաշեն	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 130 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1

ՀՀ ՖՆ գործարանական վարչություն
Հ/Հ.900332001594.900332001503
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան



ԿԱՊԱՍԱՌՈՒ

«Գազին Մ2» ՍՊԸ
ք.Երևան, Արտաշիսյան 372, բն.16
«Արդշինբանկ» ՓԲԸ
հի 2480101509490000
ՀՎՀՀ 02229549

Տնօրեն՝ Ն. Մանուկյան



**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Չափաբաժին 7

N Ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Շենավան բնակավայրի գազիֆիկացման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 140 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 140 օրացուցային օրվա ընթացքում

Չափաբաժին 10

N Ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրի փողոցների ց/ճնշման գազատարի կառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 130 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 130 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական
կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001594, 900332001503
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար _____ Վահրամ Խաչատրյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գազշին ՍՉ» ՍՊԸ
ք.Երևան, Արտաշիսյան 372, բն.16
«Արդշինբանկ» ՓԲԸ
հհ 2480101509490000
ՀՎՀՀ 02229549
Տնօրեն՝ Ն. Առապարան



Ծավալաթերթ-Նախահաշիվ* **

ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Շենավան բնակավայր գազիֆիկացման աշխատանքների կատարման

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
	1.Գազիֆիկացում 1 փողոց				
1	Փոսերի բանդում ձեռքով մետաղական հենասյուների համար III կարգի գրունտում և հարթեցում տեղում	մ ³	15,43	7450	114954
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ ³	15,43	41600	641888
3	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից D=76x3,0մմ H= 5(6)մ 2հատ	տ	0,0648	680000	44064
4	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից D=76x3,0մմ H= 3(3,7)մ 92հատ	տ	1,83816	680000	1249949
5	Կիսախողովակների տեղադրում	կգ	57,29	690	39530
6	Պարոնիտ	կգ	22,43	1700	38131
7	Մետաղական թիթեղ հենարանների տակ δ=3մմ	կգ	197,40	690	136206
8	Հենասյուների մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ ²	84,09	290	24386
9	Հենասյուների յուղաներկում 2 անգամ	մ ²	84,09	970	81567
10	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Φ76x3մմ պնեմատիկ փորձարկումով	գմ	589,00	6530	3846170
11	Խողովակաշարի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ ²	140,55	290	40760
12	Գազատարի յուղաներկում 2 անգամ	մ ²	140,55	970	136334
13	Համակարգի փչամաքրում	գմ	589,00	100	58900
14	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	կգ	25,50	850	21675
15	Պողպատե անկյունակ 90° Φ76x6 արժեքը	հատ	14,00	1610	22540
16	Պողպատե անցում Φ76x6/Φ57x5 արժեքը	հատ	1,00	1980	1980
17	Խցափակիչ Φ76x3,5 արժեքը	հատ	2,00	2440	4880
18	Անշարժ հենարան H=1,5 մպ 70,	կգ	156,80	920	144256
19	Նախագծվող գազատարի ներմիացում գործողին Φ76x3.5-մպ70	տեղ	1,00	28000	28000
	Ընդամենը				6676169
	2.Պահարանային գազի կարգավորիչ կայան ՊԳԿԿ 50				
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	1,10	6800	7480
2	Ավելորդ գրունտի բարձում ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 1կմ	տն	1,98	2450	4851
3	Ավազի շերտի պատրաստում	մ ³	0,55	7890	4340
4	ե/ բետոնե հիմքի պատրաստում ՊԳԿԿ տակ B15 դասի բետոնից	մ ³	1,10	41600	45760
5	Ամրան Φ8Ac1	կգ	26,10	680	17748
6	ՊԳԿԿ 50-ի տեղադրում	հատ	1,00	119000	119000

8	Նախագծվող գազատարի ներմիացում գործողին $\Phi 76 \times 3.5$ -մպ100	տեղ	1,00	32000	32000
9	Նախագծվող գազատարի ներմիացում գործողին $\Phi 76 \times 3.5$ -մպ70	տեղ	1,00	28000	28000
	Ընդամենը				318379
	3.Գազիֆիկացում 2 փողոց				
1	Փոսերի քանդում ձեռքով մետաղական հենասյուների համար III կարգի գրունտում և հարթեցում տեղում	մ ³	33,08	7450	246446
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ3	33,08	41600	1376128
3	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից $D=219 \times 4$ մմ $H=5$ (6)մ 2հատ	տ	0,25452	720000	183254
4	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից $D=76 \times 3,0$ մմ $H=5$ (6)մ 6հատ	տ	0,1944	680000	132192
5	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից $D=76 \times 3,0$ մմ $H=3$ (3,7)մ 166հատ	տ	3,3167	680000	2255356
6	Կիսախողովակների տեղադրում	կգ	149,42	690	103100
7	Պարոնիտ	կգ	42,37	1700	72029
8	Մետաղական թիթեղ հենարանների տակ $\delta=3$ մմ	կգ	365,40	690	252126
9	Հենասյուների մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	209,76	290	60830
10	Հենասյուների յուղաներկում 2 անգամ	մ2	209,76	970	203467
11	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից $\Phi 273 \times 4$ մմ, պնեմատիկ փորձարկումով	զմ	25,00	31620	790500
12	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից $\Phi 89 \times 4$ մմ, պնեմատիկ փորձարկումով	զմ	1167,00	8460	9872820
13	Խողովակաշարի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	347,55	290	100790
14	Գազատարի յուղաներկում 2 անգամ	մ2	347,55	970	337124
15	Համակարգի փչամաքրում	զմ	1192,00	100	119200
16	Պողպատե ձևավաճի մասերի տեղադրում	կգ	97,47	850	82848
17	Պողպատե արմունկ $90^\circ \Phi 89 \times 6$ արժեքը	հատ	38,00	4730	179740
18	Պողպատե անցում $\Phi 89 \times 6,0 / \Phi 57 \times 5,0$ արժեքը	հատ	2,00	4220	8440
19	Խցափակիչ $\Phi 273 \times 8,0$ մմ արժեքը	հատ	2,00	22100	44200
20	Խցափակիչ $\Phi 89 \times 3,5$ արժեքը	հատ	4,00	4400	17600
21	Եռաբաշխիկ $\Phi 89 \times 6$ արժեքը	հատ	1,00	6100	6100
22	Անշարժ հենարան $H=1,5$ մպ 80	կգ	402,00	920	369840
23	Նախագծվող գազատարի ներմիացում գործողին $\Phi 89 \times 4,0$ -մպ 80	տեղ	2,00	30000	60000
	Ընդամենը				16874130
	4.Գազիֆիկացում 6 փողոց				
1	Փոսերի քանդում ձեռքով մետաղական հենասյուների համար III կարգի գրունտում և հարթեցում տեղում	մ ³	12,94	7450	96403
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ3	12,94	41600	538304
3	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից $D=76 \times 3,0$ մմ $H=5$ (6)մ 4հատ	տ	0,1296	680000	88128
4	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից $D=76 \times 3,0$ մմ $H=3$ (3,7)մ 63հատ	տ	1,25874	680000	855943
5	Կիսախողովակների տեղադրում	կգ	40,90	690	28221
6	Պարոնիտ	կգ	15,90	1700	27030
7	Մետաղական թիթեղ հենարանների տակ $\delta=3$ մմ	կգ	149,42	690	103100

8	Հենաայունների մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	105,88	290	30705
9	Հենաայունների յուղաներկում 2 անգամ	մ2	105,88	970	102704
10	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից $\Phi 76 \times 3$ մմ պնեմատիկ փորձարկումով	զմ	421,00	6530	2749130
11	Խողովակաշարի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	100,40	290	29116
12	Գազատարի յուղաներկում 2 անգամ	մ2	100,40	970	97388
13	Համակարգի փչամաքրում	զմ	421,00	100	42100
14	Պողպատե ձևավաճի մասերի տեղադրում	կգ	32,30	850	27455
15	Պողպատե անկյունակ $90^\circ \Phi 76 \times 6$ արժեքը	հատ	18,00	1610	28980
16	Պողպատե անցում $\Phi 76 \times 6 / \Phi 57 \times 5$ արժեքը	հատ	1,00	1980	1980
